ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի օգոստոսի 25-29-ը Իսպանիայի Թագավորություն (Մադրիդ) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1.ԹԵՄԱՆ

Աշխատաժողով՝ ավիաընկերությունների լիցենզավորման վերաբերյալ

2. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ՀԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐ

ՀՀ ՏԿԵ նախարարի օգնական Անի Խաչատրյան, ՀՀ ՏԿԵՆ օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարող Լուսինե Ամիրխանյան, թռիչքների թույլտվությունների բաժնի մասնագետ Հրաչյա Ենոքյան

3.ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐ և ԺԱՄԿԵՏՆԵՐ

Իսպանիայի Թագավորություն(Մադրիդ), օգոստոսի 26-28

4.ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ

Եվրոպայի Ավիացիոն անվտանգության գործակալություն (EASA)

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Աշխատաժողովի առաջին օրը քննարկվել են ավիաընկերությունների շահագործման լիցենզիաների իրավական և վարչական ասպեկտների ընդհանուր նկարագիրը, գործունեության լիցենզիա տրամադրելու և պահպանելու պահանջները, ԵՄ փոխադրողների համար շուկա մուտք գործելու ընթացակարգը, հանրային ծառայության պարտավորությունները օդային տրանսպորտի համար, հատկապես քննարկվել է Իսպանիայի կանոնակարգերն ու փորձը:

Աշխատաժողովի 2-րդ օրը Եվրոպայի Ավիացիոն անվտանգության գործակալության փորձագետները ներկայացրել են լիցենզավորման ֆինանսական վերահսկողությունը համաձայն ԵՄ դրույթների, ոլորտի գործարար բնութագրերը և մոդելները:

Աշխատաժողովի վերջին օրը եղել է լիցենզավորված ընկերության դեպքի ուսումնասիրություն, խմբային վերլուծություն և արդյունքների քննարկում:

Նախարարի օգնական Ա. Խաչատրյան

05.09.2025